



ՄԱՀԱՐՁԱՆ



թէ ծաղր չը համարէիք ասածս,
ես մանրամասն կը նկարագրէի
Բազզաթեանի չոփի նման նի-
հար ու երկար մարմինը, մէջ-
քին կպած փորը, նորա վերին
աստիճանի բարակ վիզը, որը
աւելի տանձի կոթի էր նմա-
նում, քան թէ վզի. կը նկա-
րագրէի նորա հսկայական քիթը, որի միակ առաւելու-
թիւնն ալն էր, որ խնչելու մեծ յարմարութիւն էր
ներկայացնում,—նորա պէնսնէի տակ պատսպարուած
փոքրիկ աչքերի գէսուդէն վազվազող բիբերը, խելացի և
լայն ճակատը, որը տարածուել էր մինչև նորա ծոծրակը և
ալլն: Բայց, եթէ ծաղր էլ չը համարէք, դարձեալ չարժէ
ուշադրութիւն դարձնել մարդուս արտաքինի վերալ, թէ-
պէտև գոյնք երեսաց և քալլք ոտից լայտ առնեն զմորդու:
Բազզաթեանը ձեզ օրինակ: Թէպէտ նորա արտաքինին
պիտի համապատասխանէր և նորա հոգեկան աշխարհը,
բայց շուտով կը համոզուէք, որ նորա արտաքինը և ներ-

քինը շատ հեռու են միմեանցից։ Իբրև փաստ առածիս, ևս համառօտ կը նկարագրեմ այն երանաւէտ օրը, երբ Բազզաթեանը, իր ընկերներին նստեցրած սեղանի շուրջը, իսկ ինքն իր բարակ ոտներից մէկը խորասուզած բազկաթոռի փափկութեան մէջ, միւսով դիք կանգնած՝ ճառում էր տաքացած։ Նա ճառում էր այն էլ ի՞նչ պէս էր ճառում... կատարեալ մի ծիցերոն։ Նորա ամեն մի խօսքը թափանցում էր բոլոր ներկայ եղաների սիրտը և տակն ու վրայ անում։ Փակագծում նկատենք, որ Բազզաթեանը մեծ շնորհք ունէր խօսելու և նա, այդ ընդունակութեան շնորհիւ, քանիցս անգամ արժանացել էր բուռն ծափահարութիւնների։ Նա պոռատախօս ճոռոմարան չէր, այլ խօսող և գործող։ Նորա արած հաստրակական գործերը շատ քչերին է յաջողւում կատարելու։ Այս անգամուայ ճառը դարձեալ մի հասարակական գործի առթիւ էր։ Երբ Բազզաթեանը տաքացած ճառում էր, նորա բոլոր ընկերները՝ աչքերը չուած՝ ոգևորութեամբ լսում էին և անդադար հաւանութեան ցոյցեր անում։ Բանն այն էր, որ Գուսան պսեւդոնիմով բանաստեղծը վախճանուել էր և Բազզաթեանը արծարծում էր այդ օրը պօէտի շիրմի վերալ մահարձան կառուցանելու գեղեցիկ միտքը։

Հանգուցեալ Գուսանը,—ասում էր Բազզաթեանը ոգևորուած,—մեր քնած ու թմրած մտքերը զարթեցրեց, ծնեցրեց մեր մէջ ինքնաճանաչութիւնը, մեր ապառաժոտ և խոպանացած երկիրը հերկեց, ցանեց նորա մէջ կենդանի սերմեր, որոնք ծլելով, որոնք աճելով... հասկանում էք, որոնք աճելով... այն, որոնք աճելով... ասում եմ ձեզ՝ որոնք աճելով...»

Այստեղ տաքացած Բազզաթեանը իւր ոսկրացած ձեռքը ալնպէս խփեց սեղանին, որ վերջին խօսքերը չը

լսուեցին։ Սաստիկ թըրիկոցից մինչև անգամ ննջարանի կիսաբաց դռնից ծկրտի տուեց մի կանացի գլուխ։

— Ե, ասենք թէ Ալէքսանդր Մակեդոնացին մեծ մարդ էր, էլ ինչ կարիք կալ աթոռները ջարդելու, նկատեց ընկերներից մէկը՝ ծիծաղելով։

— Այո—շարունակեց նոյն ոգևորութեամբ Բազզաթեանը, ամենակին ուշադրութիւն չը դարձնելով ոչ Ալէքսանդր Մակեդոնացու, ոչ էլ աթոռների վերայ։ — այն — մեր ազգը ապերախտ է։ Մենք երբէք չենք գնահատում մեր գործիչներին, չենք լաւերժացնում նրանց փառքը, մենք չենք ցոյց տալիս մեր երախտագիտութիւնը նորան, որ զոհեց իր ամբողջ կեանքը իր ժողովրդի բարօրութեան Հանգուցեալ Գուսանը տնիսոնց մշտկ էր ազգային գրականութեան, նա մեր խաւար մտքերի լուսաւորութեան համար մի պայծառ ջահ էր։ Նա մեր կանթեղն էր, նա միակ լուսատու տստղն էր մեր գրական միգապատ հորիզոնում։ բայց այլ ևս նա չը կալ, ասողը թըրուաւ…, այս, այդ ասողը թուաւ…

— Եւ յետքից պայծառ գիծ թողեց, — կամաց մըրմըրաց հանդիսականներից մէկը։

— Գուսանը, — շարունակեց Բազզաթեանը, — մեր ժողովրդի սրտի անկեղծ թարգմանն էր. նա վշտի ժամերին լալիս էր ժողովրդի համար, նա ազգի բարօրութեան ժամանակ հըճւում էր և անվերջ ցնծում։ Նա իր սրտից քղխած երգերը ձօնում էր իր մալրենի աշխարհին։ Նորա երգի մէջ էր և մեր անցեալը, և մեր ներկան…

— Եւ մեր ապագան, — կամաց մըրմըրաց առաջուան պարոնը։

— Գուսանը, — շարունակեց Բազզաթեանը, — երկար տարիներ հնչեցրեց իր քաղցրածախն, իր անուշախօս, իր գեղահնչիւն ոսկէ քնարը, որի կախարդէք, որի դիւ-

թիչ, որի հմալիչ հնչիւնները՝ արձագանք տալով արարաշխարհում՝ վերացան մինչև երկինք և անմահացրին մեծ պօէտի անունը։ Սակայն ալժմ, աւազ, լրեց այդ քնարը, մեռաւ պսակաւոր մեծ գուսանը։ Ինչո՞վ մենք պիտի լաւտնենք մեր երախտագիտութիւնը նորան, ով արիւն քրտինք մտած՝ զոհեց իր կեանքը ազգի լուսաւորութեան համար։ Ինչո՞վ պիտի լաւերժացնենք նորա լիշտակը։ Ինչ որ էլ անելու լինենք, մենք դարձեալ երախտապարտ կը մնանք նորա գործունէութեան։ մենք չենք կարող լիովին ցոլց տալ մեր երախտագիտութիւնը ալն մարդուն, որը բարձրացաւ վեհ Պառնասը, նորա կատարեց երգեց մեզ համար, երգեց և վերացաւ անմահների աշխարհը։ Իմ համեստ կարծիքով, յարգելի պարուններ, մեր կողմից երախտագիտութեան մի փոքրիկ մասնիկ կը լինէր, մի չնչին հիւլէ կը լինէր, եթէ մենք Գուսանի շիրմի վերալ կանգնեցնէինք մի մահարձան...

— Ներեցէք, որ ձեր խօսքը կտրում եմ, — ընդմիշեց մի պարոն, — Գուսանը մեռած չէ, որ մենք նորա համար արձան կանգնացնենք։ Գուսանը կենդանի է և կենդանի կը մնայ լաւիտեան։ Սերունդներ կը գան, սերունդներ կ'անցնին, դարձեալ Գուսանի անունը անջինջ կը մնայ։ Գոնէ ես իմ կողմից միանգամալն հակառակ եմ արձան կանգնեցնելու մտքին, քանի որ նա, ինքը պօէտն է իր համար արդէն արձան կառուցել։ Գուսանի արձանը նորա անմահ գրուածքներն են, նորա դաշնակներն են, որոնք դեռ շատ դարեր...

— Ոչ, ներողութիւն, սխալում եք... գոչեցին ամենքը միաբերան։

Բազզաթեամնը մի կում սառը ջուր խմեց, դիմեց իւր ընդդիմախօսին և սկսեց պաշտպանել մահարձանի հարցը։ Նա միմի թուեց լուսաւոր ազգերի ալն գոր-

ծիչների անունները, որոնց լիշտակին արձաններ են կառուցել: Նա երկար խօսեց, ճառեց տաքացած և վերջ ի վերջու իր ընդգիմախօսին էլ համոզեց, որ անհրաժեշտ է Գուսանի շիրմի վերալ մի փառահեղ մահարձան կանգնեցնել: Արևո վկայ, ընթերցող, օրինակելի մարդ է Բաղզաթեանը, եթէ նա չը լինէր, ով գիտէ, գուցէ մինչև օրս էլ մահարձանի հարցը քնած լինէր: Բաղզաթեանի ընկերները, արդէն հարցը վճռած համարելով, հերթով մնաք բարով ասացին և ցրուեցին իրանց տները, մանաւանդ որ արդէն կէս զիշեր էր: Նորանց հեռանալուն պէս ննջարանից դուրս եկաւ Բաղզաթեանի կինը, պաշեց իր մարդու բերանը և ասց.

— Բերան խօմ չէ, տաճար է, տաճար...

*
*

Բաղզաթեանը գրականութեան սիրահար էր և ջերմ սլաշտպան: Սկզբներումն ինքն էլ ձեռքը մի քնար տառաւ և փորձեց նորան հնչեցնել: բայց նորա ձայնը ընկաւ փորի մէջ և մինչև օրս էլ դուրս չ'եկաւ, որովհետեւ լարերը համը էին ու ժանդոտած: Նա շատ ճիգ թափեց գրողի անուն վաստակելու, բայց նա չը կարողացաւ արժանանալ այդ անունին: Նորա բոլոր ջանքերը զուր անցան: Նա թղթերը մըստեց, քերթուածներ շարադրեց, բայց չը հասաւ քերթողի կոչումին Բաղզաթեանը տեսնելով, որ Մուզան նորանից երես է դարձրել, չարացած դէն շպրտեց քնարը և, թուրքերէնից թարգմանելով, բացականչեց.

— Աստուծուց չը կայ, մարդարէն ինչ անի *):

Բաղզաթեանը Գուսանի մտերիմ բարեկամն էր: Նա իր ազատ ժամերի մեծ մասը նորա մօտ էր անցկաց-

*) Ալլահան եօխ դըր, փէլղամբար նէլնասըն:

նում. իսկ մի խմբագրական կլուն էլ հաւատացնում էր, որ նա Գուսանին նիւթ էր մատակարարում գրելու համար։ Գուսանի մահը այնպէս խոցել էր Բազզաթեանի սիրտը, որ, ասում են, նա ամբողջ մի շաբաթ արտասունք է թափել. իսկ դագաղը դուրս տանելիս, ինչպէս պատմում են տկանատեսները, նա հանգուցեալի բնակարանում մի քանի անգամ ուշաթափուել է և իր արտասուքներից մի քանի տեղ լճակներ կազմել։

Մի քանի օրից յետոյ մահարձանի հարցի առիթով դարձեալ ժաղով կար Բազզաթեանի տանը։ Բացի առաջուան պարոններից այս անգամ հաւաքուել էր Գուսանի երկրպագուների մի ստուար բազմութիւն։ Կալին և մի քանի օրիորդներ և տիկիններ իրանց կտրտուած ծամերով (կտրտուած ծամերը ազատամտութեան նշան է)։ Բոլոր աթոռները և բազկաթոռները բռնուած էին։ Ընդարձակ գրասեղանի վերայ շաբած էին մի քանի արծաթէ մոմակալներ իրանց վառ մոմերով։ Իսկ նորանց կողքին թափթփուած էին մաքուր թղթեր, մատիսներ, գրիչներ և ալլն։ Դահլիճն ճակատին կախած էր Գուսանի մեծագիր լուսանկարը. իսկ առաստաղից կախած էր մի կանթեղ. ժողովական պարոններից ամեն մէկը, չը նայելով գեղեցիկ սեռի անվերջ հազին, իրան սեպուհ պարտք էր համարում խունկ ծխել Գուսանի լիշտատակին, և դորա համար էլ ամբողջ դահլիճը լցուել էր թանձր մխով։ Կանթեղի լուսը հազիւ էր նկատուած ծխախոտի ծխի քուլաների միջից։

Ժողովին նախագահում էր Բազզաթեանը։

— Համեստափալլ տիկիններ և յարգելի պարոններ։ — Խօսեց նախագահը. — այս օրուան օրը, երբ արդէն վճռուած է մահարձանի հարցը, երբ ամենքս արդէն եկել ենք միևնույն եղրակացութեան, պէտք է ընդհանուր ուժով վճռենք և մի ամենակարեսոր խնդիր. ա-

սում եմ ամենակարևոր, որովհետեւ առանց այդ խնդիրը լուծելու մենք միանգամայն զբկությ կը լինինք մահարձան կառուցանելու հնարաւորութիւնից։ Այժմ հարց է ծագում՝ թէ ինչ դրամական աղբիւրներով պիտի իրագործենք մեր նպատակը։ Ահա ձեզ մի հում նիւթ, որ կարօտ է մշակման։

—Ես կառաջարկէի, —խօսեց մի պարոն, —որ տը բուեն մի շարք թատրոնական ներկայացումներ և նոցնից գոլացած արդիւնքը յատկացուեն մահարձանի դործին։

—Ի հարկէ, ի հարկէ, —պնդեց տիկին Նըր։

—Թատրոնի յուսով մնացողը իր հացը ցամաք կուտի, —նկատեց մի ուրիշ պարոն, —մեր ժողովուրդը թատրոն չի յաճախում։

—Ի հարկէ, ի հարկէ, —պնդեց տիկին Նըր։

—Ես կառաջարկէի, —խօսեց մի երրորդ պարոն, —որ ներկայացումների փոխարէն սարքուին մի շարք պարահանդէսներ։

—Մեր ժողովուրդը պարել չի սիրում, —նկատեց մի այլ ժողովական, —չեմ կարծում, որ պարահանդէսը յաջողութիւն ունենալ։

—Ի հարկէ, ի հարկէ, —դարձեալ շեշտեց տիկին Նըր։

—Իսկ իմ կարծիքով, —խօսեց մի չորրորդ պարոն, —աւելի լաւ է եթէ հրատարակենք Գուսանի երկերը և արժան գնով տարածենք ժողովրդի մէջ։

—Թէկուզ ամեն մի գրքի գինը մի կոպէկ նշանակենք, —ընդդիմախօսեց ժողովականներից մէկը, —դարձեալ մեր ժողովուրդը չի գնիլ, որովհետեւ մերոնք չեն սիրում ընթերցանութիւնը։

—Ի հարկէ, ի հարկէ, —կը կնեց տիկին Նըր։

Միւս տիկինները և օրիորդները բոլորովին լուռէին։

Նորանք աչքի տակով նալում էին տիկին Նեին և
իրանց սրտի մէջ ուրախանում, որ իրանց ներկայացու-
ցիչը լեռ չէ մնում պարհներից: Ընթերցող, ահա թէ
որտեղ է իրաւունքների հաւասարութիւնը:

Ել մէկ ել չեմ ուզում կրկնել այդ ժողովում տե-
ղի ունեցած ճառախօսութիւնները և վիճաբանութիւնը.
միայն այսքանը կասեմ, որ ամենքը վճռեցին դիմել
ազգին, հանգանակութիւն անել և գումարուած փողը
գործադրել... (ուրիշ բանի չը կարծէք) մահարձանին:
Ընտրուեց մի մասնաժողով, իսկ Միքայէլ Բազզաթեանը
—նախագահ-գանձապահ: Եւ ուրիշին էլ անլարմար էր
նախագահ-գանձապահ ընտրել, քանի որ այդ գործի
նախաձեռնողը Բազզաթեանն էր:

Նեւևեալ օրը յայտարարեցին բոլոր լրագիրներում
նախագահ-գանձապահի և մասնաժողովի անդամների
անունները և հրաւէր կարդացին ամբողջ ազգին: Մին-
չև անգամ ամենքը կարդալով յայտարարութիւնը և
հրաւէրը, գովում էին Բազզաթեանի եռանդը, դէպի
Գուստանն ունեցած նորա սէրը և բացականչում.

—Կեցցէ Բազզաթեանը. մաշալլա Միքայէլ!

* * *

Երախտագէտ ազգը սկսեց իր նուիրաբերութիւն-
ները: Սշխարհիս ամեն կողմից ժողովուրդը սկսեց ու-
ղարկել նախագահ-գանձապահին իր փողերը: Բագուի
նաւթահորերից, հեռաւոր Ամերիկայից, Հնդկաստանից,
Պարսկաստանից և այլն տեղերից ստացուեցան բաւա-
կանի փողեր: Դպրացների սաներն անգամ չը խնալեցին
իրանց կոպէկները...

Անցել էր մի քանի տարի, երբ լրագիրներում հրա-
տարակուեցաւ, որ Գուսանի մահարձանը կառուցանելու
համար գումարուած մասնաժողովը հրաւիրում է ճար-

տարապետներին կազմել մահարձանի նախագիծը, խոս-
տանալով լաւագոյն նախագծերի համար մըցանակ։

Կարդալով այդ լալտարարութիւնը, բոլոր ճարտա-
րապետները սկսեցին թափել իրանց ճարտարութիւնը
և մատների շնորհքը։ Նորանք նստած՝ գիշեր-ցերեկ
մտածում էին զանազան նախագծեր։ Ճարտարապետնե-
րից մէկը ուզում էր շինել մի ահագին գունտ, գնտի
վերայ մի թևատարած հրեշտակ, հրեշտակի գլխին մի
քնար, քնարի ծալըին Գուսանի արձանը, արձանի վե-
րալ մի մեծ գրիչ, գրչի ծալըին մի գիրք, գրքի կող-
քին մի ընթերցող մանուկ, մանուկի գլխին մի տոպ-
րակ խելք և ալսպիսի հազար տեսակ երևակայական
բաներ։ Բայց վերջը ինքը ճարտարապետն էր ծիծա-
ղում իր նախագծի վերալ, երբ իր երևակալութեան
մէջ միմեանց վերալ էր դարսում մահարձանի բոլոր
մասերը։

Մի ուրիշ ճարտարապետ էլ ալսպէս էր նախագը-
ծում մահարձանը։ — մի քարաժայու, որի շուրջը կանգ-
նած են մի խումբ փոքրիկ մանուկներ, իսկ ժայռի կա-
տարից Գուսանը գրքեր էր թափիթփում մատաղ սերնդի
առաջ։ Երբ նա այս նախագծի մասին պատմեց իր մի
ծանօթ պարոնի, վերջինս ժպտալով բացականչեց։

— ծշմարիտ, պարոն ճարտարապետ, շատ լաւ էք
մտածել։ ծիշա իմ պառաւ աատին լիշեցի, երբ նա մեզ,
փոքրիկ չարաճճիներիս, ժողովում էր իր շուրջը և չա-
միչ բաժանում։

Մի փորձուած ճարտարապետ էլ ալսպէս էր մտա-
ծում։ Շինել մի խաւար անդունդ, որի մթութեան մէջ
խարխափում են մի քանի մարդիկ ոչխարի գլխով։ իսկ
Գուսանը՝ ջահը ըռնած ձեռքին՝ կռացած լուս է սըփ-
ուում անդնդի մէջ։ Նա երկար մտածում էր, զոռ էր
տալիս իւր երևակալութեան, բայց չէր կարողանում։

ձևակերպել խաւար անդունդը էր թարիսափող մարդ. կանցավ: Միայլ ճարտարապետ էլ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գուսանը մեր ապառաժոտ սըրտերում ցանեց ինքնաճանաչութեան և բարի զգացմունքների սերմեր, մահարձանը այսպէս էր նախագըծում: Մի լերկ ապառաժ, որի վերալ Գուսանը՝ ձեռքին բռնած ձմերուկի և սեխի սերմերով լի տոպըրակը բռատան է դնում:

Ճարտարապետները ամեն կողմից ուղարկում էին իրանց նախագծերը Բազզաթեանին, բայց սա ոչ մէկն էլ չէր հաւանում: Վերջապէս Բազզաթեանը վճռեց, որ մահարձան նախագծելու գլխացաւանքն էլ ինքը լանձն առնի: Նա թէպէտ ճարտարապետ չէր, բայց պարծտնքով առում էր մասնաժողովի անդամներին.

— Մի ալնպիսի մահարձան կտռուցանեմ, մի ալնպիսի շքեղ ու Փանտաստիքական բան շինեմ, որ հողը ջուրը տեսած չը լինի: Մի սքանչելի ու փառահեղ արձան շինեմ, որ ամենքը մատով ցոյց տան, որ աշխարհիս ամեն կողմից գնն, տեսնե՞ն ու հիշնան...

— Էլ ե՞րբ. ձեր ալդ շնորհքն էլ ո՞ր օրուայ համար էք թողել. — Կրկնում էին ամեն անգամ մասնաժողովի անդամները:

— Սպասեցէք, պարոններ. սա շտապելու գործ չէ, սա մահարձան է, հանաք-մասխարութիւն չէ. պէտք է լու մտածել:

— Այսքան երկար մտածել չի լինիլ, — ասում էին անդամները, — ինչ անելու էք, շուտով արէք, տարիներն անցնում են, իսկ դուք գեռ մտածում էք: Օորանից աւելի երկաը մտածելուց դուք անշուշտ թոքախտ կը ստանաք:

— Հեշտ բան էք կարծում մահարձան կառուցանելը, — բացականչում էր Բազզաթեանը, — գեռ ընդառնում էք առաջարկ կատարելու համար, որ առաջարկ կատարելու համար կատարելու համար:

մենք մի քանի հազար ոռութիւն է հաւաքուել, միթէ կարգել է մի քանի հազարով արժանավայել արձան կտուցանել:

—Եղբայր, թէ փողը պակասում է, դարձետլ դիմենք ազգին և շարունակենք մեր սկսած հանգանակութիւնը. իսկ եթէ այլ ևս ոչ մի տեղից լոլս չըկալ, գոնէ մի համեստ կիսարձան կառուցանենք. եթէ կիսարձանի համար էլ չի բաւականանալ այդ գումարը, գոնէ Գուսանի գերեզմանի վերալ մի հասարակ քար քաշել տանք և փորագրել տանք պօէտի անունը, որ չ'անհետանալ, հողի հետ չըհաւասարուի նորա թանկագին գերեզմանն... Վերջապէս ազգը բողոքում է, հաշիւ է պահանջում մեր գործունէութիւնից...

—Ազգը բեհեսաք նամադնուլ է անում: Հա, հա, հա, հանաք եմ անում, հանաք: Մի փոքր էլ համբերեցեք և շուտով ամեն բան գլուխ կը բերուի:

—Առանից աւելի էլ համբերել չի լինիլ:

—Խոստովանք լինի, մի փոքր տկար եմ. ստամոքսս վնասուած է և մարսողութիւնս տնկանոն է կատար. շում — ասաց մի անգամ Բազզաթեանը, — բժիշկները ասացին, որ կուզմիշի էքստրակտ ընդունեմ, բայց ինչքան փորձեցի, այդ գեղը բոլորովին չ'օգնեց: Հիմա, մի ուրիշ բանիմաց բժիշկի խորհրդով, ինչոր մի տեսակ հաջեղ պիտի կուլ տամ... Աստուած, կանչեցէք, որ շուտով առողջանամ և մահարձանի գործն էլ գրուխ ըերեմ:

—Այդ «հաբերը» շուտով կուլ կը տաք:

—Շուտով, շուտով, արդէն պատրաստ են:

—Իսկ հաբերից լետոյ վալ թէ ձեր ստամոքսը չըքժկուի:

—Կը բժշկուի, կը բժշկուի, անհոգ կացէք, մահարձանն էլ ամենամօտ ապագայում կառուցուած կը լինի:

— Հաստատ:

- Ի հարկէ, հաստատ, թէ չէ փուած մահարձանը
մբկար կը դիմանան:
- Իսկ ձեր խօսքը... նա էլ հաստատ կը լինի:
 - Այո, հաստատից էլ հաստատ...

*
*

Մոռեցել էր Գուսանի մահուան տասնամետկը:

Բոլոր հնացած պարտամուրհակները և յանձնարարած գումարները, արդէն ուժասպառ եղած, մանում էին իրանց նոր շրջանը, որը ոուսերէն կոշւում է ճանութեածութեան մոռացել էր արդէն Գուսանի անունը: Եւ որովհետեւ վերջին անգամները երկու հարեւան ազգերի մէջ պատերազմ կար, ալդ պատճառով էլ բոլորեքեան առօրեալ խնդրով էին զբաղուած: Իսկ Միքայէլ Բազզաթեանը ալդ ժամանակ միայն իր «Հարերով» էր զբաղուած: Հաբերը այնքան խոշոր էին, որ Բազզաթեանը սիրտ չէր անում նորանց կուլ տալու: Հիւանդը վախենում էր, որ մի գուցէ նորանք դէմ ընկնեն, մնան բօղազում և խեղդամահ անեն նորան:

— Պարոն բժիշկ, ասաց նա,—ինձ թւում է, որ քօղազիս անցքը նեղ է և փոքրիկ, իսկ ձեր հաբերը անհամեմատ խոշոր. աղաջում եմ, զննեցէք բօղազս և ինձ յալտնեցէք նորա տրամագծի չափը:

— Ինչ էք ասում, - պատասխանեց բժիշկը, —ուրիշները սորանից աւելի խոշորներն են կուլ տալիս. դուք ամենեւին միք վախենալ, երեսներդ խաչ հանէք և կուլ տուեցէք:

— Գիտէք, ինչ կայ, ես ճանաչում եմ մի պարոն, որ խոշոր-խոշոր հաբեր էր կուլ տուել. բայց յամառ հաբերը, փոխանակ ստամոքսը գնալու, փոխել էին իրանց մարշրուտը և կըկին դուրս թափթփուել խեղճ

Հիւանդի քթածակերից... վախենում եմ, որ մի գուցէ
մի ալդպիսի օլին էլ իմ գլուխը գալ:

—Այդ ձեր ասած պարոնի բանը ուրիշ է, իսկ
ձերը ուրիշ:

—Ի՞նչպէս:

—Այդ պարոնի բօղազը անշնորհք է եղել:

—Իսկ դուք հաւատացած էք, որ իմ բօղազը շնորհ-
քով է:

—Ոչ միայն շնորհքով է, այլ և սքանչելի է նորա-
շենքը:

—Ուրեմն կարելիք է կուլ տալ:

—Ոչ միայն կարելի է, այլ և անհրաժեշտ է ձեր
ստամոքսի համար:

—Իսկ եթէ յանկարծ, Տէրը մի արասցէ, փորահա-
րինք ընկնեմ:

—Անհոգ կացէք, փորահարինքի խնդիրը իսկոյն
կարելի է լուծել:

—Ինչո՞վ:

—Լուծողական ձեթով:

Բազզաթեանը հաբերից մէկը մօտեցրեց բերանին,
տատանուեց և սարսափած կրկին լեռ քաշեց: Իսկ եթք
բժիշկը նորան քաջալերեց, նու կրկին մօտեցրեց հաբը-
բերանին և բացականչեց.

—To be or not to be¹⁾?

—To be, պարոն Բազզաթեան: Ես ձեզ հաւա-
տացնում եմ, To be!

—Յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ...

—Ոմէն:

—Սպասեցէք, սպասեցէք, պարոն բժիշկ. «ամէնը»
գեռ վաղ էր:

¹⁾ Այսեւ, թէ չըմինել (Համլէտ):

Երկաթը տաք-տաք կը ծեծեն:

—Վնաս չունի, նորից կարելի է նորան տաքացնել:

—Իէ, էլ միք ուշացնիլ:

—Իսկ համը բնչպէս է:

—Ոչ թթու է, ոչ էլ կծու, այլ անուշահամ ու քաղցր, ինչպէս չամիչ: Ուրեմն՝ մէկ, երկու, պատրաստուեցէք, —երեք:

Առաջին հաբը կուլ գնաց, նորա բարի օրինակին հետևեցին և միւսները:

—Անուշ, մարսական:

—Մերսի, եղբայր պատուական:

Ներեցէք, ընթերցող, որ այսքան երկոր զբաղեցրի ձեզ Բազզաթեանի հաբերի հարցով: Եթէ Հայոց ազգի խուար կանթեղները ձեզ ասելու լինին, որ Բազզաթեանի հաբերը իմ ասելիքին չեն վերաբերում և հեղինակը զուր է գցել նորանց «Մահարձանի» մէջ, չըհաւատաք: Ընդհակառակը հաբերի և մահարձանի հարցերը իրար հետ կապուած են անքակտելի հանգուցներով: Եթէ մահարձանը չըլինէր, հաբերն էլ չէին լինիլ. իսկ եթէ հաբերը չըլինէին, մահարձանն էլ չէր լինիլ: Լիալուս եմ, որ շուտով ամենքդ էլ կը խոստովոնէք ասածիս ճշմարտութիւնը:

Գարունը բացուել էր:

Ասուն, անասուն, լեռներ ու ձորեր, զարթնելով ձմրան խորը քնից, ողջունում էին գարնան գալը և համբուրում արևի պայծառ ճառագայթների հետ: Դաշտերի ձիւնը հալւում էր և իր տակի եղած-չեղածը մերկացնում ու երեան հանում աշխարհի առաջ: Զմեռուան սպիտակ գորգը, որը խարսւակ ու շքեղ դիմակի նման պատել էր արար աշխարհս, ալժմ հետզհետէ չքանում էր: Նորա տակից ալժմ երեսում էին թէ գե-

զեցիկ մարդագետնները և թէ աղբակոյտերը։ Ահա
տարուալ այդ ժամանակն էր, երբ յանկարծ լուր տա-
րածուեց տմեն տեղ, թէ այն բազմամարդ քաղաքում,
ուր վախճանուել էր Գուսանը, Միքայէլ Բազզաթեանի
նախաձեռնութեամբ արդէն կառուցուած է պօէտի շիր-
մի վերալ մի հրաշալի արձան։ Ազգի ուրախութեանը
չափ չը կար։ Ամենքը հրճում էին և փառաբանում
Բազզաթեանի անունը։ Բոլոր քաղաքներից սկսեցին
շնորհաւորական հեռագիրներ և նամակներ ուղարկել
Գուսանի այրին և նորա որբ մնացած որդոց։ Ամեն
տեղից շատ շնորհակալական և գովաստնական հեռա-
գիրներ և ուղերձներ ուղարկուեցան Բազզաթեանին
նորա շնորհքի, ճարտարապետութեան և եռանդի հա-
մար։ Ամենքի հետաքրքրութեան չափ ու սահման չը
կար։ Բոլորեքեան էլ փափագում էին իրանց սեփական-
աշքերով տեսնել մեծ պօէտի փառահեղ ու հրաշալի
մահարձանը, որը, ինչպէս պատմում էին, ականտես-
երը, իր հատը չունէր ողջ աշխարհում։ Ասեն սէկը-
նմի այլ տեսակ էր երեակալում նորան, որովհետև ար-
ձանը արձանի նման չէին պատմում, այլ մի չը տես-
նուած, մի չը լսուած ու հրաշք բան։ Ճշմարիտ, ըն-
թերցող, օրինակելի մարդ է Բազզաթեանը. եթէ նա
չը լինէր, մահարձանի հարցը մինչև օրս էլ քնած կը
լինէր։

— Սուտ չէիք ասում, պարոն Բազզաթեան, —ա-
սում էին մասնաժողովի անդամները, —որ մի այնպիսի
արձան պիտի կանգնեցնէք, որ հողը-ջուրը տեսած չը
լինի, որ աշխարհիս ամեն կողմից գան, տեսնեն ու
հիանան։

Բազզաթեանը, լսելով իր ընկերների գովեստները,
ոչինչ չէր խսում, ուլ միտան՝ խորհրդաւոր կերպով
հաջում էր և կոկորդը մաքրում։ Նա այնքան համեստ

էր, որ ալդ գովեստները չը լսելու տեղ էր դնում:

— Սուտ չեիք ասում, պարոն Բազզաթեան, որ «Հաբերը» կուլ տալուն պէս, իսկոյն գլուխ բերէք արձանի գործը. ալժմ, ի հարկէ, լաւ է ձեր ստամոքսը:

— Ե՛հ, գոհութիւն Աստուծոյ, — պատասխանում էր Բազզաթեանը և ձեռքով շփում իր տորզած փորը, որը մի ժամանակ կպել էր նորա մէջքին:

Բայց և այնպէս Բազզաթեանի կառուցած մահարձանը տմենքի համար հետաքրքրութեան առարկայ էր դարձել: Նատերը պատմում էին, որ մահարձանը ներկայացնում է մի մարմարէ պատուանդան, որի վերալ կանգնում է Գոււանը. իսկ պատուանդանի տակից չըքնաղատես Մուզան աջ ձեռքով մատուցանում է պօէտին ոսկէ քնարը, իսկ միւս ձեռքով ցոյց է տալիս դէպի Պառնասի կառարը. արեւը դուրս գալուն պէս, ամեն առաւօտ, ոսկէ քնարը ինքնիրան սկսում է նուազել «Զայն տուր ով ծովակ» երգը. իսկ երեկոյեան, արեւը մայր մտնելուն պէս, Մուզան երեք անգամ կանչում է բարձրածայն. «Փառք ու պատիւ Գոււանին»: Նոյն Մուզան գիշերուտոյ կիսին եօթն անգամ կանչում է բարձրածայն. «Կեցցէ Միքալէլ Բազզաթեան» և զարթեցնում քնած աշխարհը: Մտհարձանի նկարագրութիւնը լսողները, բերանները բաց էին անում և ապշած բացականչում: Տէր, ողորմեա. ալդ էլ չեինք իմացել, որ արձանը կարող է ինքն իրան խօսել, որ քը նարը կարող է ինքն իրան նուագել...

Բայց նկարագրողները թե բահաւատներին հաւատացնելու համար ասում էին.

— Ինչու չէ, Միթէ Եղիպտոսի Մեմնոնի արձանը ամեն առաւօտ ձայն չէր արձակում միթէ արգանը ինքն իրան չի նուագում: Միթէ ժամացոլցի սլաքները

ինքն իրան չեն պտառւմ: Եւ վերջապէս մարդուս ձեռքին գժուար բան կալ:

Զանազան քաղաքներից սկսեց գիմել գէպի մահարձանի քաղաքը հետաքրքրութղների մի ահագին բազմութիւն: Երկաթուղու կալարանը լցուել էր եկուրներով: Սորանց մէջ կալին նկարիչներ, որ եկել էին Գուռանի մահարձանի պատկերը նկարելու. կալին հոգևոր սկաններ, որ եկել էին մաղթանք կատարելու արձանի տակին և խունկ ծխելու: Կալին երաժիշտներ, որ եկել էին ծանօթանալու ինքն իրան նուագող քնարի մեխանիզմի հետ. կալին ճարտարապետներ, որ եկել էին արձանի շենքու հետ ծանօթանալու և ալգախով կատարելագործելու իրանց արուսեատը. կալին խմբագիրներ, գունազան թերթերի աշխատակիցներ, տիկիններ, օրիորդներ և ալլն: Սորանք բոլորն էլ խմբուեցին միասին և սրտատրով սկսեցին առաջ ընթանալ քաղաքի փողոցներով: Ահա եկուրները հասան քաղաքի ալն մասը, ուր Բազզաթեանը կառուցել էր արձանը:

— Ո՞ւր է մահարձանը, հ՞ը: Ալ քեզ, արմանք զարմանք. — գոչում էին ամենքը անհամբերութեամբ, — մեղայստեղ ցոլց տուեցին, բայց ոչինչ չէ երևում: Զը լինիթէ, ուրիշ քաղաքամասումն է:

— Ո՞չ, ոչ. հենց այստեղ ցոլց տուեցին, բայց չէ երևում: Տէր, ողորմեա. այս բնչ հրաշք է: Զը լինիթէ մահարձանը աներեւութացել է:

Ալդ միջոցին փողոցով անցնում էր մի համեստափալլ տիկին, որը երկրպագու էր հանգուցեալ պօէտի հանճարին: Եկուրներից մի պարօն, որը ճանաչում էր ալդ տիկնոջ, մօտեցաւ նորան՝ բարեեց և հարցրեց.

— Տիկին, տիկին, ի սէր Աստուծոյ, ասացէք — ո՞ր տեղ է Գուռանի մահարձանը:

—Ահա Գուսանի մահարձանը։ Զէք տեսնում ալն...
դառնութեամբ պատասխանեց տիկինը։

Ամենքը հետաքրքրութեամբ վեր բարձրացրին ի-
րանց աչքերը և տեսան իրանց առաջ մի նորակառոյց
գեղեցիկ շենք, որի բաց պատուհաններից մէկի առաջ
Բազզաթեանը՝ անվրդով նստած՝ իր կնոջ հետ քաղցը
զրոյց անելով, պաքսիմատով սուրճ էր վալելում...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Դեկտ. 26 1898

Թիֆլիս

